ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԹԵՄԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ (31 հոկտեմբերի 2009 թ.)

Մեծարգո նախագահ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության,
Հարգարժան վարչապետ Հայաստանի Հանրապետության,
Գերաշնորհ եւ Հոգեշնորհ Հայրեր,
Թեմական ներկայացուցչական ժողովի սիրելի պատգամավորներ.

Ուրախ ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ողջունելու ձեզ եւ բերելու ամենքիդ Հայրապետական Մեր սերն ու օրհնությունը: Գոհություն ենք բարձրացնում առ Աստված, որ տեսնում ենք ամենքիդ քաջառողջ եւ մեր Եկեղեցուն ծառայության մեջ՝ պատրաստակամ ու նախանձավոր, որով համախմբվել եք այսօր:

Թեմական ներկայացուցչական ժողովը նոր իրողություն է եկեղեցական մեր կյանքում՝ սկիզբ առած 1995 թ. Ազգային-եկեղեցական ժողովի որոշումով: Թվով երրորդ այս ժողովը, ինչպես արդեն տեղյակ եք, նվիրված է Թեմական կանոնադրության ուղենշային փաստաթղթի քննարկմանն ու հաստատմանը:

Հայ Եկեղեցին կանոնադրությամբ օժտելու գաղափարն սկիզբ է առել Հայ Եկեղեցու բարեկարգության համատեքստում եւ շուրջ 100 տարիներ դարձել օրակարգային խնդիր: Հրապարակվել են Հայրապետական կոնդակներ, այն քննարկման մնայուն հարց է եղել Ազգային եկեղեցական, եպիսկոպոսաց, Գերագույն Հոգեւոր Խորհրդի ժողովներում:

Երջանկահիշատակ Գեւորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսը, 1917 թվականին հրապարակած իր Կոնդակում, անդրադառնալով Կանոնադրության անհրաժեշտությանը, ցավով է նշում, որ Հայ Եկեղեցի են թափանցել նրա նկարագրին ու վարչական կառույցին անհարիր եւ օտար դրսեւորումներ, որոնց շարքում եւ՝ 1836 թ. Պոլոժենիան: Գեւորգ Ե Կաթողիկոսի նպատակն էր ստեղծել Հայ Եկեղեցու կանոնադրություն՝ հիմնված մեր Եկեղեցու ավանդության եւ կանոնական հիմնական սկզբունքների վրա: Երջանկահիշատակ Հայրապետի այս նախաձեռնությունը, սակայն, հաջողություն չունեցավ, ինչպես եւ հաջողություն չունեցավ 1925 թվականին նրա ձեռնարկած հաջորդ փորձը: Ժամանակը եւ պայմանները նպաստավոր չեղան խնդրի լուծման համար:

Վերազային կանոնադրության անհրաժեշտությանն անդրադարձ են ունեցել ինչպես Խորեն Ա Մուրադբեկյան, այնպես եւ Գեւորգ Զ Չորեքչյան Կաթողիկոսները: Հայրենական մեծ պատերազմից հետո մեղմացել էր Եկեղեցու հանդեպ խորհրդային իշխանությունների անհանդուրժող վերաբերմունքը: Այն իր արտահայտությունն էր գտել նաեւ Հայ Եկեղեցու պարագային, որը դրսեւորել էր աշխարհսփյուռ հայության կյանքում կարեւորագույն գործոն լինելու իր ներուժը,

ոգեշնչել ժողովրդին Հայրենիքի պաշտպանության գործում: Կաթողիկոսական նոր ընտրությունների առիթով 1945 թ. գումարված Ազգային եկեղեցական ժողովը քննության նյութ դարձրեց նաեւ Հայոց եկեղեցու կանոնադրության հարցը: Այն ամբողջության մեջ լուծում չունեցավ, սակայն ժողովի կողմից վավերացում ստացավ կարեւորագույն գլխակարգումներից մեկը՝ «Ազգային եկեղեցական ժողով գումարելու կանոնադրությունը»:

Հայ Եկեղեցին կանոնադրությամբ օժտելու նպատակով քննարկումները շարունակվեցին նաեւ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության շրջանին: 1955 թ. ստեղծվեց կանոնադրության մշակման հանձնաժողով, որն իր կազմած կանոնադրության նախագիծը ներկայացրեց 1958 թվականի հոկտեմբերին գումարված Եպիսկոպոսաց ժողովին: Նախագիծը, սակայն, կանոնական ուժ չստացավ: Վազգեն Ա Կաթողիկոսի՝ այս ուղղությամբ կատարած հաջորդ փորձը վերաբերում է 80-ական թվականներին, որը նույնպես հաջողություն չունեցավ: Նույն ճակատագիրն ունեցան կանոնադրության մշակման աշխատանքները երջանկահիշատակ Մեր նախորդի՝ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրոք: Թեմական ներկայացուցչական առաջին ժողովում (գումարված 1997 թվականին) կարեւորությամբ ընդգծվեց Հայոց եկեղեցին կանոնադրությամբ օժտելու անհրաժեշտությունը: Եկեղեցականներից ու աշխարհականներից ձեւավորված խառն հանձնախմբի կողմից ներկայացված նախագիծը, սակայն, վերստին ընդունելություն չգտավ եկեղեցական մեր կառույցներում՝ տեղական պայմանների առանձնահատկությունները նկատի առնված չլինելու պատճառաբանությամբ: Իրականում կանոնադրության ընդունման ձախողումների պատճառներն ավելի խորն էին: Դրանք պայմանավորված էին դարի քաղաքական բարդ իրավիճակներով:

20-րդ դարասկզբին հայ եկեղեցական կյանքը փլուզվեց Ցեղասպանության արդյունքում: Աշխարհի տարբեր երկրներում ապաստանած տարագիր հայությունը ստիպված եղավ իր հոգեւոր կյանքը վերակազմակերպել եղած հնարավորությունների համաձայն, միմյանցից տարբեր եւ հաճախ հեռացած կամ կորցրած եկեղեցական ավանդույթը: Իսկ Խորհրդային Միության կազմում՝ անաստված գաղափարախոսության պայմաններում, Եկեղեցին ենթակա եղավ գործող օրենքներին: Ներեկեղեցական կյանքում իր արտահայտությունը գտավ խորհրդային ճամբարի եւ դեմոկրատա-կապիտալիստական երկրների միջեւ սառը պատերազմի ու անհաշտ մրցակցության ոգին՝ արտահայտվելով տեղային ողջ բազմազանությամբ: Խորհրդային Միության հանդեպ դրսեւորված կասկածամտությունը ուղղակիորեն ազդում էր նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նկատմամբ դրսեւորվող վերաբերմունքի վրա եւ հաճախ շահարկվում էր քաղաքական նպատակներով: Արդյունքում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցում տեղ գտավ բոլորիս հայտնի ներեկեղեցական պառակտումը, որն առավել անբարեհույս դարձրեց կանոնադրության մշակման եւ որդեգրման պայմանները: Այսպիսով՝ հակառակ ներդրված հսկայական ջանքերի, եռանդի եւ ժամանակի, Հայոց

Եկեղեցու կանոնադրության ընդունման գործընթացը փակավին շարունակում է մնալ ծառացած հրամայականներից կարեւորագույնը:

Գոհություն Աստուծո, իրավիճակն այսօր փոխված է: Խորհրդային Միության փլուզումը, Հայաստանի անկախ պետականության վերածնունդը եւ այլ երկրների հետ մեր երկրի հարաբերությունների ասպիճանական զարգացման միտումները նախադրյալներ են ստեղծում խոչընդոտող արտաքին ազդակների վերացման, ինչը եւ կանխորոշում է ներեկեղեցական մեր կյանքում դրանց հետեւանքներից ձերբազատվելու անխուսափելիությունը:

Այս իրողությունները նկատի առնելով, հակառակ պատմական աննպաստ փորձառության՝ Մենք եւս Մեր գահակալության սկզբից եւեթ ձեռնամուխ եղանք կանոնադրության մշակման աշխատանքների շարունակմանը: Կանոնադրության կարեւորության մասին Մենք անդրադարձել ենք Հայրապետական Մեր անդրանիկ կոնդակում՝ համոզումն ունենալով, որ մեր Եկեղեցու առաքելության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է կանոնակարգված գործունեությամբ:

Այս նպատակով շարունակեցինք կանոնադրության մշակման հանձնախմբի աշխատանքները՝ անհրաժեշտ նկատելով ներկայացված նախագծի հոդվածները ամրագրել պատմա-կանոնական հիմնավորումներով: Նկատի առնելով, սակայն, մի կողմից այս աշխատանքի ժամանակատարությունը եւ մյուս կողմից թեմերում կանոնադրական իրավիճակի կարգավորման հրատապ անհրաժեշտությունը՝ առաջնահերթ նկատեցինք ուսումնասիրության առանձին նյութ դարձնել կանոնադրության՝ թեմերին առնչվող հատվածը: Գերագույն Հոգեւոր Խորհրդի կողմից ստեղծվեց հանձնախումբ, որը բարեհաջող իրականացրեց աշխատանքները՝ ներկայացնելով թեմական եւ ծխական կանոնադրության ուղենշային փաստաթղթի նախագիծը: Նախագիծը, ինչպես տեղյակ եք, քննարկվել եւ հավանության է արժանացել Գերագույն Հոգեւոր Խորհրդում եւ վերջինիս թելադրությամբ պարբերաբար ներկայացվել թեմերին՝ կարծիքների եւ առաջարկությունների համար:

Նկատի առնելով, որ հանձնախմբի կողմից ներկայացվելու են նախագծի հայեցակարգային հիմնադրույթները եւ քննարկվելու են հոդվածները, Մենք չենք ցանկանում անդրադառնալ բուն փաստաթղթին: Անհրաժեշտ ենք տեսնում, սակայն, ամփոփ ներկայացնել կանոնադրությունների առումով թեմերում տիրող իրավիճակը:

Թեմերում գործող կանոնադրություններին Մենք ծանոթ ենք դարձել Մեր գահակալության ընթացքում: Մեր թեմերը, ըստ կանոնադրական իրավիճակի, կարելի է տարբերակել երեք խմբերի.

1. Թեմեր, որոնք առհասարակ չունեն կանոնադրություն (Հայաստանյան թեմեր եւ այլն):

2. Թեմեր, որոնց կանոնադրություններում աղճատված են եկեղեցագիտական ու կանոնական հիմնական սկզբունքները (ընդգրկված են մշակութային, ազգային

միությունների կառուցվածքում՝ որպես կցորդ ստորաբաժանում եւ կամ անտեսված է եկեղեցականների հանգամանքը) (Անգլիայի, Հարավային Ամերիկայի թեմեր եւ այլն):

3. Թեմեր, որոնց կանոնադրությունները կարիք ունեն մասնակի փոփոխությունների (ԱՄՆ Արեւելյան եւ Արեւմտյան թեմերը, Կանադայի թեմը եւ այլն):

Թեմերի կանոնադրության հպանցիկ վերլուծությունը ակներեւ է դարձնում, որ գոյություն չունի գեթ հիմնական հարցերի նկատմամբ մոտեցումների միօրինակություն: Կանոնադրություններում հաճախ խաթարված են եւ կամ բավարար չափով արտացոլված չեն աստվածաբանական, կանոնական աքսիոմատիկ այնպիսի հիմնադրույթներ, որոնք վերաբերում են Եկեղեցու՝ որպես աստվածակենտրոն, անկախ եւ ինքնուրույն հաստատության արձանագրմանը, Սուրբ Էջմիածնի հոգեւոր կենտրոն լինելուն, Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանգամանքին, թեմի առաջնորդի եւ հովվի իրավասություններին ու պարտականություններին, նրա պաշտոնի կոչման ու ազատման կարգին, Եկեղեցու վարչական կառավարման մեջ ժողովրդի մասնակցության ապահովմանը եւ այլն:

Թեմական եւ ծխական կանոնադրությունների ուղենշային փաստաթղթի ընդունումը մեր Եկեղեցու համար հուսալի հեռանկարներ է ստեղծելու թեմերի կյանքը առավել կազմակերպված դարձնելու առումով: Այս փաստաթղթի ընդունմամբ մենք զգալի քայլ ենք կատարելու Հայ Եկեղեցու կանոնադրության ընդունման գործընթացում՝ միաժամանակ արտացոլելով Հայոց Եկեղեցու պատմականոնական դիմագիծը, որի առանցքային բաղադրիչներն են մեր Եկեղեցու ազգային բնույթը, Սուրբ Էջմիածնի հոգեւոր կենտրոն լինելը, Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր իշխանությունը եւ թեմերի ինքնավարությունը: Այս փաստաթղթով ամրագրվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին կենտրոնով Հայ Եկեղեցու թեմերի միությունը հիմնական հարցերում՝ երկրորդական հարցերում ընձեռելով հնարավորությունը տեղական առանձնահատկությունները արտացոլելու համար:

Հայցում ենք Տիրոջ օրհնությունը թեմական ներկայացուցչական այս ժողովի աշխատանքներին՝ ակնկալելով ձեր բոլորի գործուն մասնակցությունը քննարկումներին:

Մեր աղոթքն է, որ Բարին Աստված արդյունավորի մեր ջանքերը՝ ի խնդիր մեր Եկեղեցու պայծառության եւ բարեկարգության: